ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

29.3.2012թ.
12/03467

«Ինֆորմացիոն ազատության կենտրոն» ՀԿ
Նախագահ Շուշան Դոյդոյանին
Հասցե՝ Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560-360, էլ. փոստ՝ foi@foi.am

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 21.03.2012թ. № 165-ի 4 գրության հայտնում ենք հետևյալը.

1. 2009թ. նոյեմբերին սկսվել է ՀՀ ԱԳՆ նոր կայքի և տարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների նախագծման-մշակման գործընթացը: ՀՀ ԱԳՆ նոր կայքը սկսել է գործել 2011թ. մարտի 1-ից, այնուհետև հաջորդաբար գործարկվել են դեսպանությունների կայքերը: Առ 26.03.2012թ. դրությամբ գործում են օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների 36 կայքեր, մշակման փուլում են գտնվում 20 կայքեր:
2. Նշված նախագծի (ԱԳՆ+դեսպանություններ) արժեքը կազմել է 2,700,000 ՀՀ դրամ: Վճարումը կատարվել է փուլային տարբերակով.

   2009թ. – 0 ՀՀ դրամ
   2010թ. – 750,000 ՀՀ դրամ
   2011թ. – 1,950,000 ՀՀ դրամ

   Կայքի մշակման CMS տեխնոլոգիայի շնորհիվ ՀՀ ԱԳՆ համակարգի բոլոր կայքերի ընթացիկ փոփոխությունները, թարմացումները և սպասարկումը, ինչպես նաև նոր կայքերի բացումն իրականացվում է ՀՀ ԱԳՆ ուժերով:
3. Վերը նշված ծախսերը կատարվել են արտաբյուջետային միջոցների հաշվին:

Հարգանքով՝

Նախարարի տեղակալ ~~ՇԱՀԱՐԾ~~ ՔՈՉԱՐՅԱՆ